# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանը | **2022** թ. հունիսի **27**-ից մինչև **2022** թ. Օգոստոսի **22**-ը |
| Անունը, ազգանունը, հայրանունը | Հովհաննես Սերգեյի Քոչարյան |
| Ծրագրի անվանումը | Հանրապետության նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության առջև դրված կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով կոնկրետ հանձնարարականներ կատարելու նպատակով՝ սոցիալական մեդիայի հաշիվների հետ աշխատանքների իրականացում |

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Սոցիալական մեդիայում (Youtube, Instagram, Telegram) Հանրապետության նախագահի և Հանրապետության նախագահի աշխատակազմի գործունեության, ինչպես նաև Հայաստանի ներքաղաքական, տնտեսական, տարածաշրջանային հրատապ խնդիրների, տեղ գտած կարևոր նյութերի, այդ թվում՝ բարձրացված հրատապ հարցերի մասին ամենօրյա կտրվածքով վերլուծական տեղեկանքների նախապատրաստում, սոցիալական ցանցերի միջոցով քաղաքացիների հետ կապի պահպանում, հաշվետվությունների պատրաստում:

2. Վերոհիշյալ սոցիալական պլատֆորմներում ՀՀ նախագահի աշխատակազմի՝ Instagram-յան, Youtube-յան և Telegram-յան պաշտոնական հաշիվների վարման վերաբերյալ ռազմավարական առաջարկությունների մշակում, դրանք ՀՀ նախագահի աշխատակազմի համապատասխան պաշտոնյաներին ներկայացում, համաձայնեցում, գործողությունների հաջորդականության մշակում:

3. Instagram սոցիալական ցանցում ՀՀ նախագահի աշխատակազմի պաշտոնական էջի ստեղծում, էջում արվել է 12 հրապարակում, ընդ որում՝ յուրաքանչյուր հրապարակման համար համապատասխան մուլտիմեդիային կոնտենտի (լուսանկարներ և տեսանյութ) և տեքստի ընտրություն: Բոլոր հրապարակումների մեկնաբանությունների մոդերացիա՝ այդ թվում մշտադիտարկման միջոցով վիրավորական արտահայտություններ և ադրբեջանական ծագում ունեցող տասնյակ մեկնաբանությունների հեռացում շուրջօրյա ռեժիմով:

4. Հիշյալ ժամանակահատվածում ՀՀ նախագահի աշխատակազմի յուրության պաշտոնական էջի հրապարակումներն ունեցել են 20.000 դիտում: Ակտիվության դրական դինամիկա:

5. Հանրապետության նախագահի աշխատակազմի տելեգրամյան ալիքում արված 29 հրապարակում, որոնք ընդհանուր ունեցել են 5076 դիտում:

6. Հանրապետության նախագահի աշխատակազմի թվիթերյան հաշվի ստեղծում, ձևավորում և անգլերենով 15 թվիթի նախագծում և հրապարակում, որոնք ունեցել են 706 արձագանք: Ստեղծումից իվեր՝ թվիթերյան հաշիվն ունեցել է 1491 այցելություն:

7. Կատարված աշխատանքների մասին նախատեսված ժամկետներում հայերեն լեզվով գրագետ, ամբողջական և համապարփակ վերլուծական տեղեկանքների նախապատրաստում:

Հովհաննես Սերգեյի Քոչարյան

________________________

**22.08.2022թ.**